

Թեկնածուական աշխատանքի վրա ինքնուրույն աշխատող գիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցորդներ կարող են լինել այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրի որակավորում, մասնագիտական աշխատանքային փորձ, ինչպես նաև ատենախոսության վրա աշխատանքը արտադրական, գիտական կամ մասկավարժական գործունեության հետ համադրող անձինք:

Այն անձինք, ովքեր գրանցվում են ըստ մասնագիտության, որը տարբերվում է բարձրագույն կրթության մասին վկայող իրենց դիպլոմից (դիպլոմավորված մասնագետ, մագիստրատուրա) անպայման պետք է ուսման մեկ տարվա ընթացքում հանձնեն ընտրված մասնագիտությամբ որակավորման քննություն:

ԱՊՀ երկրների և այլ արտասահմանյան քաղաքացիները կարող են համարվել հայցորդներ՝ համաձայն ՀՀ և ՌԴ միջազգային և միջկառավարական պայմանագրերի կամ արտասահմանյան կազմակերպությունների հետ ուղիղ կապի, երբ վերջիններս նախատեսում են իրավաբանական և ֆիզիկական անձանց պատրաստման ուսման վարձերի և ՀՌՀ ռեկտորատի կողմից հաստատված գներով հավելյալ ծառայությունների ամբողջական փոխհատուցում:

Հայցորդությունը իրականացվում է ՀՌՀ-ում հաստատված կարգի համաձայն ինչպես բյուջետային միջոցներից, այնպես էլ պայմանագրային հիմքով: Ասպիրանտուրայում ուսման ամբողջական կուրս անցած, ինչպես նաև հայցորդության ժամանակը լիովին օգտագործած անձինք կարող են ՀՌՀ-ում կրկնակի կցվել որպես պայմանագրային հիմունքներով հայցորդ:

Այն անձինք, ովքեր ամբողջովին չեն օգտագործել հայցորդության ժամկետը, կարող են կցվել ՀՌՀ-ին մնացած ժամանակով:

Հայցորդները կցվում են ՀՌՀ-ին կրեդիտային համակարգով հետբուհական կրթության հիմնական մասնագիտական կրթական ծրագրի իրականացման, թեկնածուական քննությունների և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցորդության համար: Կրեդիտային համակարգով հետբուհական կրթության հիմնական մասնագիտական կրթական ծրագրի իրականացումը և թեկնածուական քննությունների նպատակով հայցորդների կցումը կարող է կատարվել ոչ ավելի, քան երկու, իսկ թեկնածուականի պատրաստման համար՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով:

Հայցորդների կցումը կարող է իրականացվել ինչպես բոլոր, այնպես էլ առանձին թեկնածուական քննությունների հանձնման նպատակով:

Գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցորդները ըստ կցման վայրի հանձնում են թեկնածուական քննություններ փիլիսոփայությունից, օտար լեզվից և մասնագիտությունից, ինչպես նաև ինֆորմատիկայից (ստուգարք):

ՀՌՀ հայցորդները կցվում են ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 1-ը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար հայցորդները պետք է ներկայացնեն հետևյալ հիմնական փաստաթղթերը՝

- ՀՌՀ ռեկտորի անունով ասպիրանտուրա ընդունվելու դիմում:
- Բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի պատճեն (արտասահմանում կրթություն ստացած անձանց համար՝ ի թիվս ԱՊՀ քաղաքացիների, համապատասխան դիպլոմի պատճեն, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրված օտարերկրյա պետության կրթության փաստաթղթերի՝ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմին համապատասխանությունը հաստատող վկայականի պատճեն):

- Հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի և գիտահետազոտական հաշվետվությունների ցուցակ: Այն անձինք, ովքեր չունեն գիտական աշխատանքներ և գյուտեր, ներկայացնում են ռեֆերատներ ըստ ընտրած մասնագիտության:
- Ասպիրանտուրա ընդունվողի կողմից թեկնածուական քննություններ հանձնելու դեպքում վկայական (այն անձանց համար, ովքեր հանձնել են թեկնածուական քննություններ արտասահմանում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրված վկայական առ այն, որ ներկայացվող փաստաթուղթը օրինական ուժ ունի):
- Անձը հաստատող փաստաթղթի, զորակոչիկների համար զինվորական գրքույկի (գրանցման վկայականի) և աշխատանքային գրքույկի պատճենները:
- Հարցաթերթիկ և ինքնակենսագրություն (ձեռագիր՝ ռուսերենով):
- Առողջության մասին տեղեկանք:
- 3 լուսանկար (3X4 չափսի):
- Ֆակուլտետի գիտական խորհուրդի կամ բուհի գիտական խորհուրդի արձանագրությունից քաղվածք այն անձանց համար, ովքեր ուղղորդվում են ասպիրանտուրա անմիջապես բուհը ավարտելուց հետո:
- Բնութագիր աշխատավայրից :
- Աշխատանքային գրքույկից քաղվածք (առկայության դեպքում):

Հավելյալ փաստաթղթերի ցուցակ՝

- Ռեֆերատ ըստ մասնագիտության,
- Ամբիոնի գրախոսությունը տվյալ մասնագիտության գծով ռեֆերատի շուրջ անցկացված հարցազրույցի արդյունքների վերաբերյալ թեկնածուի հետ,
- Քաղվածք ամբիոնի նիստի արձանագրությունից,
- Նպատակային ուսման հայցորդության դիմողների համար՝ նամակ կազմակերպության կողմից և հովանավորող նամակ, որով վճարվում է ուսման վարձը:

Գիտության գծով պրոռեկտորի ներկայացմամբ և հայցորդի հարցազրույցի արդյունքների հիման վրա, ենթադրյալ գիտական ղեկավարի առկայության դեպքում և համապատասխան ամբիոնի եզրակացությամբ ՀՀ-ի ռեկտորը հրաման է արձակում կցել հայցորդին՝ նշելով կցման ժամկետը և գիտական մասնագիտությունը: Ընդունելությունից հետո 3 ամսվա ընթացքում նշանակվում է հայցորդի գիտական ղեկավարը: Հայցորդի՝ թեկնածուական քննություններ հանձնելիս կցման ժամանակ գիտական ղեկավար չի նշանակվում: